ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 15 մայիսի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Վ. Պողոսյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Գրիգորի Վահանյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Քաղաքացի Գրիգորի Վահանյանը 26.04.2013թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1202-րդ հոդվածի 6-րդ մասի, 1203-րդ հոդվածի 1-ին մասի, 1230-րդ հոդվածի 6-րդ մասի, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 5-րդ մասի եւ 67-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների սահմանադրականությունը:

2. Վիճարկվող դրույթների հակասահմանադրականության վերաբերյալ դիմողը ներկայացնում է հետեւյալ հիմնավորումները. «Դատարանները ՀՀ քաղաքացիական

օրենսգրքի 1202-րդ հոդվածի 6-րդ կետը, 1203-րդ հոդվածի 1-ին կետը մեկնաբանել են այնպես, որ... փոփոխել են նշված նորմերում ամրագրված դրույթների իրական բովանդակությունը», ինչպես նաեւ՝ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի 6-րդ կետը մեկնաբանել են այնպես, որ... փոփոխել են նշված նորմում ամրագրված դրույթի իրական բովանդակությունը»:

Դիմողի պնդմամբ. «Միևնույն համասեռ հասարակական հարաբերության նկատմամբ միաժամանակ մի քանի՝ տարբեր իրավական ակտերում գտնվող դրույթների, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1203-րդ հոդվածի, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 56 եւ 67-րդ հոդվածների դրույթների կիրառմամբ իրավակարգավորման մեխանիզմում առաջանում է բուրգ՝ վերը նշված իրավանորմերի մասնակցությամբ, որոնց «**վիրտուալ**» բովանդակությունը թույլ է տալիս իրավակիրառողին օրինականացնել տվյալ իրավահարաբերության նկատմամբ կիրառման ոչ ենթակա նորմերի կիրառումը»:

3. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը, ձեւականորեն վիճարկելով վերոնշյալ դրույթների սահմանադրականությունը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց: Ինչպես վկայում է դիմումի ուսումնասիրությունը՝ վերոնշյալ դրույթների հակասահմանադրականությունը դիմողը փորձում է հիմնավորել ոչ թե խնդրո առարկա նորմերի հակասահմանադրականության պատճառով իր սահմանադրական իրավունքների խախտման փաստով, այլ դատարանների կողմից վիճարկվող իրավանորմերի սխալ մեկնաբանմամբ եւ կիրառմամբ: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Գրիգորի Վահանյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

15 մայիսի 2013 թվականի
ՍԴԴԿՈ/2-14